# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Պետական գույքի կառավարման կոմիտեի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի փորձագետ Արաքս Առաքելյանի կողմից հաշվետու ժամանակահատվածում՝ 2024 թվականի մայիսի 7-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 7-ը կատարված աշխատանքները գնահատվում են դրական:

**Քարտուղարության պետ**
/գնահատող պաշտոնատար անձի պաշտոնը/

**Սուսաննա Մակարյան**
/անուն, ազգանուն/

/ստորագրություն/

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Պետական գույքի կառավարման կոմիտեի Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժին ներգրավված փորձագետ Արաքս Առաքելյանի 2024 թ. մայիսի 7-ից 2024 թ. նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածի**

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գլխավոր քարտուղարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 203-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) և 2024 թվականի մայիսի 7-ի թիվ 7 պայմանագրով ընդգրկվել եմ Կոմիտեի Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում որպես փորձագետ:

Համաձայն Հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի՝ ներկայացնում եմ 07.05.2024-07.10.2024 թվականներն ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Կոմիտեի նախագահի և տեղակալների հարցազրույցների նախապատրաստում և իրականացում,
- Զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ համագործակցություն, Կոմիտեին առնչվող տեղեկատվության, պաշտոնական տեսակետների և հաղորդագրությունների տրամադրում վերջիններիս,
- Կոմիտեի ստորաբաժանումների հետ համագործակցություն քաղաքացիների և ԶԼՄ-ների հարցերին պատասխանելու նպատակով,
- Պաշտոնական հաղորդագրությունների պատրաստում, տեսանյութերի մոնտաժում և տարածում Կոմիտեի պաշտոնական կայքէջում, սոցիալական ցանցերի էջերում, հետադարձ կապի ապահովում,
- Օտարման ենթակա պետական գույքի վերաբերյալ հայտարարությունների տեղադրում List.am հարթակում,
- Էլեկտրոնային աճուրդների համակարգի գործարկման նախապատրաստական աշխատանքների իրականացում,
- Նախարարական կոմիտեների և Կառավարության նիստերի օրակարգում ընդգրկված և Կոմիտեի կողմից մշակված կամ Կոմիտեին առնչվող հարցերի լուսաբանում,
- Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում,
- Ղեկավարության կողմից տրված այլ հանձնարարականների իրականացում:

Քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի փորձագետ — Արաքս Առաքելյան

05 նոյեմբերի 2024 թ.